ՀԱՄԱԽԵՑԻ

ԹՐՔԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ԹԷ ԹՐՔԱՄՈԼՈՒԹԻՒՆ

54

Ցնոր պատասխանի անզգամին, զի՝ մի՛ ևս յանդգնեսցի յանզգամութիւն իւր։

«Աստուածաշունչ»

Ընդդիմախօսական

ԵՂԻՇԷ Ա.-Ք. ԳԵՂԱՄԵԱՆԻ

«ՏԱՃԿՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒԻ ԱՆԿՈՒՄԸ»

գրքի առթիւ.

1920 թ.

ԹԻՖԼԻՍ.

9(47.925)
Ш-28
6388
Шишкин Иван
Иванович. Рас-
сказы

ՀԱՄԱԽՏՈՒԹԻՒՆ

ԹՐՔԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ԹԷ ԹՐՔԱՄՈԼՈՒԹԻՒՆ

9(47.925).197

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

Տ�պատասխանի անգգամին, զի մի ևս յանդգնեսցի յանդգամութիւն իւր։

«Աստուածաշունչ»

A 1/6961

Ընդդիմախօսական

ԵՂԻՇԷ Ա.-Ք. ԳԵՂԱՄԵԱՆԻ

«ՏԱՃԻԿՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒԻ ԱՆԿՈՒՄԸ»

գրքի առթիւ.

1920 թ.

ԹԻՖԼԻՍ.



ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Նուխու և Արէշի շրջաններից սկսեալ՝ Գեօքչայի, Եամախու, Բագուի և Ղուբայի Հայութեան գլխին հասած վերջին տարիների աղէտների ու պատուհասների ձեռագիր աշխատութիւնից շարահիւսելով այս ընդդիմախօսականը, լոյս ենք ընծայում Եղիշէ քահանայ Գեղամեանի ,,Ճաճիկները Կովկասում և Բագուի անկումը'' գրքի դէմ։

Ձեռնհաս անձերին թողնելով վերը յիշած գրքի լայն քննադատութիւնը, մենք այս էջերում հերքելու ենք Եամախում, Գեօքչայում և մասամբ Ղուբայում տեղի ունեցածների մասին շարայարած այն ստերը, որ հեղինակը առանձին իմն հաճուելութեամբ յերիւրել է որոշ և գիտաւորեալ նպատակով, առանց ,,անձամբ անձին'' տեսնելու և իրազեկ լինելու անց ու դարձին։

Ուստի, ընթերցող, Եղիշէ քահանայ Գեղամեանի նման գրելացաւով բռնուած լինելը չէ

շարժառիթ այս ընդդիմախօսականի լոյս ընծայման ներկայ թանկ ու կրակ օրերին, այլ՝—վերականգնել ոտնահարուած ճշմարտութիւնը, ցոյց տալ նման հեղինակին իր արժանի տեղը, ընձեռել նրա գրքերի ապագայ քննադատին նիւթեր և քեզ, ընթերցող, մի հաճելի ծառայութիւն մատուցանել, որ ըստ արժանոյն գնահատես նրա հապճեպով ու անժամանակ լոյս ընծայած անկըշռադատ գիրքը, որին մենք վիժուածք անունը կարող ենք տալ։

Ե տ մ ա խ ե ց ի

Թրքասիրութի՞ւն, թէ թրքամոլութիւն

Եղիշէ քահանայի լոյս ընծայած ,,Ճաճիկները Կովկասում և Բագուի անկումը'' գրքի ա. պրակի 76-րդ էջում ծանօթութիւն կայ գրուած, որից երևում է, որ Շամախու շրջանում ,,1917 թուի դեկտեմբերի սկզբից մինչ 1918 թուի մարտի 14-ը այլ և այլ դէպքերում, այլ և այլ տեղերում ըսպանուած Հայերի թիւն է 63, իսկ թրքերինը՝ 75 հոգի''.

Հեղինակը ուրիշի իսկ տուած առատ նիւթերը վայրիվերոյ օգտագործելով և դասաւորելով, առիթ է տալիս բողոքելով բողոքելու և յայտարարելու, որ այդ ծանօթութիւնը, ինչպէս և Շամախուն վերաբերեալ՝ բոլոր գրածները արդիւնք են միայն և միայն նրա քմայքի թելադրութեան։ Նա շատ լաւ գիտէր այդ ընձեռած նիւթերից, որ Շամախու կողմերում առաւել ևս՝ թրքերը օսմանցիների մուտքը Կովկաս հեշտացնելու նպա-

տակով, մի կողմից գինաթափ էին անում կովկասեան ճակատից հեռացող զօրքերը, գինելու համար իրենց հրոսակախմբերը, միւս կողմից ճանապարհները վտանգելով, երկաթուղին փակելով և հայոբռութեամբ զբաղուելով՝ գազազում, անհնարին էին դարձնում արևմտեան և պարսկական ճակատներից Բագու հասած հայ զինուորների վերադարձը դէպի տուն։ Ճանապարհներին հանդիպած հայերին կամ սպանում էին և կամ բոլորովին կողոպտում։ Շատերն իրենց գիւղերն էին հասնում արիւնաթաթաւ, միայն սպիտակեղէնով։ Առանձնապէս խիստ էին վարուում հայ զինուորների ու երիտասարդների հետ։

Հաշուի առնելով երկու անգամուայ՝ 1918 թուի սկզբի գինեալ ընդհարումների ժամանակ Նաբուր և Բըջով թրքական գիւղերի մօտ սպանուած ու վիրաւորուած հայերին, որոնց թիւը 20-ից անցնում էր, և որոնց դիակներն անգամ յանձնելու համար սպանող թուրքերը առանձին վարձատրութիւն էին պահանջում, մինչև 1918 թուի մարտի 14-ը թուրքերը սպանել էին ճանապարհներին, գիւղերում՝ միայն Շամախու գաւառացիներից մօտ 63 հայ, որոնց անունները և սպանման ժամանակն ու տեղը ստորև մէկիկ մէկիկ առաջ ենք բերում, որ հասկանալի լինի, թէ ինչ մեծ համբերութիւն էր պէտք այդ բոլո-

ը տանելու համար, և ինչ մեծ անմտութիւն կլինէր հայերի կողմից ,,ակն ընդ ական"-ով պատասխանել մի գաւառում, ուր 130.000 շունչ մահմեդականութիւն էր հաշւում, և հազիւ 20.000 հայութիւն, ուր ամենածանր զրկանքների գնով ձեռք էր առնւում ամեն մի զգուշութիւն արիւնահեղութեանց առաջն առնելու համար։ Եւ ի պատիւ Շամախում աշխատող հայերի, մինչ մարտի կէսը 1918 թուի՝ հայի ձեռքով չը կար սպանուած կամ կողոպտուած մի թուրք, այն ժամանակ, երբ 1917-ի դեկտեմբերին և 1918-ի յունուար, փետրուար և մարտ ամիսների ընթացքում սպանւում են և մորթոտւում 63 հայերը։

ա. 1917 թուի աշնան սկզբին տեղի է ունենում սպանութեան առաջին դէպքը, որը թելադրուած էր Շամախու թուրքերի Միլլի կոմիտէից։ Մադրասեցիք, որոնք ամենայն ամառ գիւղի հանդերում գողունի խաշնարածեցնող հարևան թուրքերին սատակելու նպատակով երբեմն նրանց ոչխարներն էին քշում, և յետոյ տուգանելով հաշւում, այս անգամ ևս ոչխար բերելիս հրացանաձգութեան են բռնւում, և մի հոգի սպանուած տալիս հարևան գարամալցիների գնդակով։

բ. 1917 թուի դեկտեմբերի սկզբներին՝ Շաբադիլ կայարանի մօտ Գևերոյնի կոչուած վայրում սպանւում են սաղիանցի Երեմիա Խ. Մատթէոսեա

նը և քովլուջեցի մէկը. սպաննելուց յետոյ մարմինները թաղել էին՝ սրանց բերած օդիով և այրել, իսկ տուարը՝ քշել։

գ. 1918 թուի յունուարի 2-ին Քարքանջից Եամախի տանող ճանապարհին, Բազիրգան կոչուած տեղում սպանուում են քարքանջեցիներ՝ Գեորգիա Մնացականեան 80 տարեկան և Հայրապետ Ա. Զաքարեանց 28 տարեկան։

դ. Յունուարի 3-ին Ախսուի մօտ գագալեցի թուրքերի ձեռով սպանուում է քարքանջեցի Համբարձում Աւետիսեանը 38 տարեկան հասակում։

ե. Յունուարի 16-ին, երեքշաբթի օրը, ցերեկով հիւր են գալիս 2-3 տնից բաղկացած Գիւրջիլար հայ գիւղը հարևան Քալուա գիւղացիներից երեք հոգի զինուած ծանօթ թուրքեր և իջնում հարուստ Աբրահամ Ոսկանեանի տունը։ Հիւրասէր տանտիրոջ հացը վայելելուց յետոյ, հիւրերից մէկը գօտեմարտի պատրուակով գրաղեցնում է Աբրահամին, իսկ միւսը հրացանագարկ անում. ձայնի վրայ ներս է մտնում միակ հարեւանը Յովհաննէս Հայրապետեան, որ նոյնպէս սպանուում է։ Ապա քշում են սրանց ընտանիքի անդամներին մօտիկ ձորը և մորթոտում առաջինի յդի կնոջը, ութ տարեկան երեխային և երկրորդի էլ կնոջը։

զ. Յունուարի 31-ին Քալանթարեանների այ-

գում սպանուում է գիշերով այգեպան Միքայէլ Միրզոյեանը։

Է. Փետրուարի 3-ին Նուրանի ջրաղացի մօտ՝ Ախաու գետի ափին սպանուում են Գիւրջևան և Հնդար գիւղերից գարձող մագրասեցիներ՝ Թադէոս Ղասաբեանց 32 տարեկան, Ահարոն Ղասաբեանց 27 տարեկան և երկու սայլապաններ։

Ը. Փետրուարի 8—9-ին Զագըրլի կայարանի մօտ սպանուում են 13 հայեր, որ գիւրջևանցիներ, զաջարցիներ և զարգարանցիներ էին։ Սրանցից մէկի համար, որ կիսակենդան էր մնացել, հազար բուբլի փրկանք, իսկ միւսների դիակները տալու համար 100-ական բուբլի վարձատրութիւն էին պահանջում Ֆրէյդուն բէկի մարդիկը։

Թ. Փետրուարի 23-ին Քիւրդամիրում սպանուում են չորս մարդ՝ մի ժամագործ, մի դերձակ և երկու ուրիշները։

Ժ. Մարտի 9-ին Եամախուց Քարքանջ տանող ճանապարհին, Բազիրգան կոչուած տեղում երկրորդ անգամ Եամախու թուրքերը սպանում են հետևեալ քարքանջեցիներին, որոնք գալիս էին Եամախի փող ստանալու պոստից, որոնց բոլորին նախապէս մերկացնում են, հասցնելով ամեն մէկին թրով 10—11 հարուածներ՝ Ներսէս Յարութիւնեանց, Թովմաս Ղէյվանդեանց 28 տարեկան և Հայրապետ Մեսրոպեան 25 տարեկան։

ԺԱ. Մարտի 10-ին սաղիանցի Խաչիկեանը Սխտուից անցնելիս, խանութից հրացանագարկ են անում և ձգում դիակը առուի մէջ։

ԺԲ. Մարտի 14-ին հին Բաթխանու ճանապարհին շամախեցի թուրքերի մի խումբ Նուրուլլա հաջի Հէյդար օղլու, Մահմեդ Ադիլ օղլու և մի երիտասարդ տաճկական սպայի գլխաւորութեամբ յարձակւում են Մադրասային մօտեցող եօթ ֆուրգոնների վրայ, որոնք ապրանք էին բերում Բագուից սպառողական խանութի համար։ Ֆուրգոններից չորսը քշում են քաղաք, երեքը մի կերպ փախուստ է տալիս, որոնցից մէկի մէջ էր Նաբուր գիւղի մօտ յունուարի 4-ին վիրաւորուած մադրասեցի Պօղոսի դիակը, որին վիրաւոր Բագու էին տարել և չէին կարողացել առողջացնել։ Ծեղում սպանուածներն են՝ Մադրասեցի Բաբաջան Ղրաղեանց, քարքանջեցի Արտեմ Մեսրոպեան, արփուդցի Զհանգիր Բագալեան, երկուքալաթխանցի, որ մարդ ու կին էին. վերջինիս ընտինքներն էին կտրատել և Մարաղեցի մոլոկան Ստեփանը, որ ֆուրգոնի տէր էր։

ԺԳ. Նոյն օրը, մարտի 14-ին Սխտում գերի են բռնում 17 հոգի դաջարցիներ և մի հոգի գուարշէնցի, որոնց ամարդի սպանման մասին մենք քիչ յետոյ կխօսենք։

Գալով կողոպուտների, ալան—թալանների և

աւազակութիւնների ցանկին, դրանք այնքան յաճախ էին կրկնւում և միևնոյն օրում, միաժամանակ մի քանի վայրերումն էին կատարւում, որ հնար չկար տեղեկութիւնները ի մի հաւաքելու։ Դեկտեմբերին, յունուարին և փետրուարին արքունական ճանապարհի վրայ կողոպտուած են 250 գինւորներ, որոնցից 12-ի գինաթափումը և մերկացումը կատարուել է Բագուի նահանգի գուրս, Կվիրիլլի կայարանում, վրացիների ձեռքով։ Մէջ չբերելով այստեղ Եամախուց և գիւղերից Քիւրդամիր մեկնող և Քիւրդամիրից դէպի գիւղերն ու Եամախի եկող թալանուած բոլոր հայերի անուններն ու ազգանունները, որոնցից խլուած ու յափշտակուած դրամներն, իրերն ու զէնքերն, ապրանքը միլիոնների՛ արժէք ունին, բաւականանանք միայն գլխաւոր աւազակների անունները տալով, և մատնանշենք, որ սրանք շարժւում և գործում էին մի թելադրութեամբ ու մի ազդանշանով։

Դրանք են՝ Եամախուց Ղարդաշ-խան և Նուրուլլա՝ Հաջի Նայմաթի որդիքը։ Ագիլ օղլի Մահամէդ և այլք։

Գիւղերից՝ 1) Թէքլէցի Խալաֆբէկի որդին Մահամէդ։

2) Հաջի Մուրսալ-բէկ որդիներով։

3) Ադիլ-բէկ Իսկենդեր-բէկով։
4) Շահփարան բէկ և որդիքը՝ Շահմար ու Մուսա-բէկ։
5) Բէքիւք Ազարէկ Սուլէյման բէկ օղլի։
6) Զումշուդ բէկ Շահ Նասիր օղլի, Շիրին և ուրիշները։

Հայերի ձեռքը գերի ընկած 75 թուրքերից, որոնց մասին յիշւում է Հեղինակի ծանօթութեան մէջ, սպանուել են 1918 թուի մարտի 15-ից շատ յետոյ մի օրուայ ընթացքում 73 հոգի՝ ի հիճուկս և ի պատասխան թշնամու ոչ միայն վերը յիշած սպանութիւնների, այլ և վերջին ամենագլխաւոր արարքի. հազարաւոր զինուած թուրքեր տաճիկ սպանների ղեկավարութեամբ, արդէն երրորդ անգամ, նախապէս պատրաստած խրամատներից յարձակւում են Շամախու գաւառի այն հայ զինուորների վրայ, որոնք վերադառնում էին Բագուից իրենց գիւղերը, անցնելով Շամախի քաղաքից չորս վերստ հեռաւորութեամբ ձգւող ճանապարհով. հէնց այդ օրերում, Ախսւում գերի բռնուած 17 դաջարեցի, մի դուարիշէնցի հայերին, որոնց մասին քիչ վերը խօսք եղաւ, սրախողխող են անում այն ժամանակ, երբ վերը յիշած գերի թուրքերից երկուսը ազատ արձակուելով գնում են

հաղորդելու Ախսուի թուրքերին հայերի պայմանը, որ, եթէ գերի ընկած զաջարեցի և դուարիշէնցի հայերը անվնաս արձակուին, մնացեալ թուրքերն ևս բաց կըթողնուին։

Այս 73 անպաշտպան գերի թուրքերի սպանութիւնը պախարակելով հանդերձ, մենք խիստ ենք դէպի Եղիշէ քահանայ Գեղամեանը նաև հետևեա՛լ պատճառով։

Ինչո՞վ կարելի է բացատրել և այն, որ նոյն պրակի 89—91 էջերում գրուած է։ ,,Եամախում քանդուած և այրուած շինութիւնների թիւումն են քսան մզկիթ՝՝։ Մինչդեռ ,,Ադրբէջան՝՝ և մուսուլման սոցիալիստների 1918 թուի № 8 ,,Մեր ուղին՝՝ թերթերի յօդուածներում, որ գրուած էին Եամախու կործանման և Բագուի մարտեան դէպքերի առաջին տարելիցին, որոնց մէջ ամեն ինչ գունաւորուած ու դասաւորուած էր յայտնի նպատակով, և անցած՝ կարևոր գործերի քննիչ յանձնախմբի քննութեան բովից, լիշուած և թուած է 13 մզկիթ։ Վերջապէս սրբապղծութեան մէջ հային մեղադրելիս, ինչո՞ւ է լռում հեղինակը և չի ասում, որ ամբողջ Ադրբէջանում՝ Նուխու և Արէշի շրջաններից սկսեալ մինչ Կասպիական ծովի ափերը հայկական ոչ մի շէն ու աւան կանգուն չմնալով, բացի Ղուբայի Փիլաւ գիւղից, այդ հարիւրաւոր կործանուած

գիւղերի և ոչ մի դպրոց ու եկեղեցի գերծ չէ մնացել աւերումից, և որ՝ առաջին օրինակը սրբապղծութեան ու հրդեհի՝ տուել են թուրքերը։ Առաջին անգամ սրբապղծուել և հրդեհով այրուել են Արփուրգի, Խանիշէնի, Բարքանջի և Մէյսարիի եկեղեցիները, Եամախու հայ-բողոքականների ժողովարանը, հայոց դպրոցը իր բեմով, կահկարասիներով, և հայոց գրադարան-ընթերցարանը, որոնցից հաւասարապէս օգտւում էին և թուրքերը, որոնցից և ոչ մէկը չկարողացան հիմնել ու պահել իրենց միջոցներով, չնայած հայերից անհամեմատ հարուստ էին, և ըստ երեւոյթին՝ բանիմաց երիտասարդների թուով՝ գերազանց։

Նոյն էջերում հեղինակը գրում է և հետեւեալը. ,,Երբ վաշտի առաջապահ մասը քաղաքի դռներին հասաւ, այնտեղ նրան ազուհացով մի աւելորդ, պատկառելի մոլլա դիմաւորեց. . . Մոլլան մանրամասն զեկուցում տուեց քաղաքի գրաւման մասին, ուր մնացել է միմիայն ինքը՝ իրան շրջապատող հասարակութեան հետ, որոնց կեանքի անձեռնմխելիութիւնն է խնդրում։ *Սպան միամտացնելով մոլլային, վերադարձաւ հրամանատարին զեկուցում տալու։ Բայց միանգամ նրա վերադարձը զինուորներից մէկը խրել ապտնել էր մոլլային*՝՝։ Դիտէք, ընթերցող, ով էր այդ մոլ-

լան։ Դա նա էր, որ երբ կովկասեան ճակատի զինուորութիւնը բոլշևիզմով վարակուած մասամբ լքել էր դիրքերը, հասել էր հայրենիք զինաթափ եղած, մասամբ էլ ճանապարհներին վտանգուած էր թուրք բանդաների կողմից, երբ ամեն մի առիթ կայծ էր, որ կարող էր հրդեհը բռնկեցնել Համախուց գեռ ևս 1917 թուի վերջերին, սա շատ անկեղծ ու սրտաբաց ճառ արտասանեց ի լուր քաղաքի ամբողջ հասարակութեան, որ առանց ազգի խորութեան մասնակցում էր մի թուրք պահակի (стражникъ) թազման յուզարկաւորութեանը։ Նա՝ յայտնի ախուռնդ ծերունի Զաֆար-Ղուլին, որ վարում էր ճգնաւորական կեանք, և երբէք մասնակցութիւն չէր ունենում քաղաքական և աշգամիջեան վէճերում, չէր երևում և ժողովներում, ողբաց անժամանակ կորուստը մի սարաժնիկի, որ մահ էր գտել պարտքի կատարման ճանապարհին, աւազակներին զսպելիս, որոնք գարձեալ հայերի՛ հետ էին գործ ունեցել։ Նա՝ պատկառելի ծերունին, ի լուր հազարաւոր ունկընդիր ժողովրդի և Համախու կործանման պատճառ եղող կովկասեան մուֆթիի Մուստաֆա էֆէնդու, որ նոր էր երկդիմի դամբանական խօսել նոյն ունկնդիրների առաջ, անիծեց բոլոր սադրիչներին, անհանգիստ տարրերին դրդողներին։ Ապա նոյն ժամին տեսնելով հայ սայլապանները քաղա-

քացի հայերի տնային իրերով լիքը սայլերը հայ գիւղերն են քշում, բացականչեց. ,,Թուրք ժողովուրդ, գնա՛, ընկիր քեզնից խոյս տուող եղբօրդ տները, աղաչիր և թող որ չհեռանայ, քանի որ առանց նրան դու չես կարող ապրել, և ոչ էլ նա առանց քեզ կեանք կունենայ՛՛։

Մատնանիշ անել ,Եղիշէ քահ.-ի նման անորոշ գարձուածքով, թէ ով և ովքեր մեղսակից եղան ոչ միայն այս պատուական մարդու տմարդի սպանմանը, այլև աղջկան առևանգմանը. ասել ե՞էրտէրի նման ոլորապտոյտ գարձուածքով, հակառակ ի կիր առած իր անուններ տալու տգեղ սովորութեան, թէ՝ ,,Մինչև նրա !!! վերադարձը զինուորներից մէկը խփել սպանել էր մոլլային՛՛, մենք մեր արժանապատուութիւնից ստոր ենք համարում, և յիշեցնում ենք Աւետարանի աշակերտին. ,,Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, և ի քում ականդ զգերանդ ո՞չ տեսանես՛՛։

Sapienti Sat.

Ի դէպ. այս պատուական մոլլա Զաֆար Ղուլու մասին որոշ դիտումով յիշատակութիւն անող հեղինակը գլացել է երկու տող խօսք ասելու մի ուրիշ էլ աւելի պատուական ու խաղաղաբեր, հարևան Թուրքերի կողմից նոյնպէս մոլլա յորջորջուող հայ Լևոն վարժապետի մասին. մի մարդ, որ առաջինը զոհ գնաց Թուրքերի գնդա-

կով, տմարդօրէն սպանուելով քաղաքի առաջին անկումից էլ չորս օր առաջ՝ մարտի 14-ին, մի մարդ, որ իր հեղինակութեամբ ու պատկառելիութեամբ սաստում էր հէնց թուրքերին, որի ընտանիքում սնուած ու մեծացած, Համախու բէգական դպրոցում, նրա ձեռի տակ սովորած ու կրթուած թուրք աշակերտներն այսօր Ադրբէջանի պառլամենտի անդամներ են և այլ հասարակական գործիչներ։

Հեղինակին չնմանելու համար մենք հրաժարուելով հրաժարում ենք առհասարակ մեղադրելուց Համախու դէպքերի ժամանակ աւելի շատ կատարած սպանութեանց մէջ հային կամ թուրքին, և լիշեցնում ենք ոչ իբր նորութիւն, որ ամեն մի երևոյթ ունի իր պատճառը։

Մեր ներկան անխուսափելի քայլն է անցեալի, որ շարանն է մի քանի տարիների սարսափելի արեան բաղանիքի, սպանութիւնների, արիւնհեղութիւնների, մարմնական և հոգեկան քայքայման անխուսափելի հիւանդգնութեան և այլանդակութեան։

Այս երկարամեայ սպանդանոցի պայմանները հարուստ հող ունէին և յեղափոխութեան հիւանդգնութեան համար, որը աւելի ծաւալուեց և խիստ տարածուեց յեղափոխութեան ,,խորացման,, և նրան կից քաղաքացիական կռիւների ժամանակ։

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ահա այդ է, որ չպէտք է զարմացնի ժողովրդի հոգուն անհարազատ իր խստութիւնների և գազանութիւնների պէսպիսութեամբ, այլ և ամեն ինչ աւերելու ու աւարելու անմիտ ցանկութեամբ, որից զերծ չէին ոչ հայերը և ոչ թուրքերը, որն անշուշտ հետևանք էր և արգասիք՝ բարբարոս պատերազմի, որից զերծ չմնացին անգամ կովկասեան ազգերի մտաւորականները, երբ սրանց մէջ ազնիւ ու շիտակ համարուած շատ շատերը դանգիսացան որպէս արկածախնդիրներ, գողեր, թալանչիներ, աւազակութեան մէջ մեղսակիցներ։

Եւ չնայած որ — Եղիշէ քահանան իր գրքի ա. պրակի 38 էջում ասում է. ,,Թաթարական քաղաքական գործիչները հէնց սկզբից և եթ ազգայիններ էին, և այդպէս էլ մնացին մինչև վերջը։ Նրանք՝ էլ չկամեցան այլ ևս Ռուսիայի հպատակը մնալ, այլ ձեռնարկեցին իրանց ինքնուրոյն, անկախ երկիրն ու իշխանութիւնն ունենալու, որ շատ ազնիւ ու բնական է ամեն մի փոքր ի շատէ գիտակից ազգի համար, երբ նա իրան տիրող ազգի կամ իշխանութեան համար՝ խորթ, արհամարուած և իրաւազուրկ զաւակ է դարձել''. այնուամենայնիւ, արդարացնել այդ թաթարական քաղաքական գործիչների գործելակերպը, մանա-

ւանդ Շամախի քաղաքի ու նրա հարուստ և բարեշէն, այժմ աւերակ գաւառի նկատմամբ՝ հէնց իր Ադրբէջանի պետականութեան շահի տեսակէտից՝ անկարելի է։

Ցոյց տալու համար յանցանքի մեծութիւնը թուրք արկածախնդիրների, հարկ է այստեղ կանգ առնել երկրի երեսից վերացած Կովկասի հնագոյն քաղաքներից այս գժբախտի վրայ, որը հին ժամանակներից սասրերկրեայ հարուածներին ենթակայ լինելով, չնայած կրել էր մեծամեծ փնասներ, բայց էլի կանգուն էր մնացել, յոյս ունէր լաւ ապագայի։ Սկսեալ խազարներից քանի-քանի անգամ աւերուել էր պարսիկների, արաբների, մոնղոլ-թաթարների, օսմանցիների և կովկասեան այլ լեռնականների ձեռքով։ Մինչև ռուսների գալը պարսից շահերից յայտնի Նադիրի հրամանով 1734 թուին քաղաքը փոխադրուել էր Ախտուի մօտերը, բայց լեռոյ դարձեալ հաստատուել իր տեղում։ Նոյն այս պատմութիւնը կրկնուել է նաև ռուսաց տիրապետութեան նախօրեակին, Զուբովի արշաւանքի ժամանակ, երբ քաղաքի – Շիրվանի վերջին խանը՝ Մուստաֆան, որի հայասիրութեան մասին այժմ էլ աւանդութիւններ կան ժողովրդի բերնում, ռուսներից ապահով մնալու մտադրութեամբ՝ փոխադրել է տալիս բնակիչներին Ֆիդ-դաղ կոչուած կովկասեան լեռնաշղթայի մի կիրճը։

Բայց յետոյ 1805 թուին հաւատարմութեան երդում տալով՝ դառնում, հնազանդւում է և վերջը փախչում Պարսկաստան։ 1820 թուին ռուսները վերջ են տալիս խանութեան, և Շամախին միացնում ռուսական տէրութեան։ Անցնելով ռուսների ձեռքը, սկսել էր աւելի մեծանալ, գեղեցկանալ բազմաթիւ շէնքերով։ 1846 թուին դառնում է նահանգական քաղաք։ Քանի կովկասեան երկաթուղին չկար, այդտեղով էր անցնում մեծ ճանապարհը, որ կապում էր Կովկասը և Պարսկաստանը Ռուսաստանի հետ։ Սրանով հասկանալի է դառնում ժողովրդական երգի այն տողը, որ ասում է. «Ռուսնեակն ինձ ցերեկ, Շիրվանը աղլուղ բերէք» կամ «Շիրվանի քարուան բերէք»։ Այդ ցոյց է տալիս, ինչպէս և հաստատ է, Շամախին դարուստ է եղել ոչ միայն մետաքսէ և այլ ապրանքներով, այլ և այստեղով են անցել մեծամեծ կարաւանները, և հայ վաճառականները ու մետաքսէ գործարան ունեցողները պակաս դեր չեն խաղացել այդ քաղաքի բարգաւաճման գործում։ Եւ շամախեցիներից ոչ ոք չի կարող ուրանալ հայերի մեծագործութիւնները թէ՛ քաղաքին ջուր մատակարարելու խնդրում, թէ՛ դպրոցական և թէ՛ այլ հանրօգուտ ասպարէզներում, որոնցից հաւասարապէս օգտւում էին բոլորը առանց ազգի խտրութեան։ Մինչդեռ թուրքերի մէջ քաղաք-

կրթութիւնը կասեցնող երևոյթներից դուրս՝ ըստանութիւններից, աւազակութիւններից բացի այլ բան մենք չենք կարող ցոյց տալ, ուր մնաց հանրօգուտ գործ կամ բարեգործութիւն, նոյն իսկ վերջին տասնամեակներում, երբ ամբողջ հարստութիւնն ու առևտուրը թուրքերի ձեռքին էր։

Սակայն 1859 թուից նահանգական քաղաք դառնում է Բագուն, և այնուհետև թէև պարբերական երկրաշարժները, Կովկասի երկաթուղագիծը, Բագուի հարստանալը զրկում են Շամախին իր վայելչութիւնից, նա դառնում է մի լեռ ընկած վայր, հասարակ գաւառական քաղաք, բայց նա իր առևտրով և հարուստ վաճառականների արած մեծաքանակ շրջանառութեամբ ու մանաւանդ, հայ գրողների մի քանիսի եկամուտներով, որ լցուում էր պետական գանձարանը, մրցում և անցնում էր Կովկասի շատ քաղաքներից։

Ահա այսպիսի մի քաղաք ջնջում են հրդեհով և կողոպուտով փոխադարձ յարձակմամբ, դեռևս տաճիկները չեկած, 1918 թ. մարտի 18-ից մինչ ապրիլի 15-ը հ. տ. հայ-թուրքական և առաւելապէս թուրքերի և մանաւանդ մուֆթի Մուստաֆա էֆէնդու խաբեբայ, երկդիմի և անհեռատես քաղաքականութիւնը մի կողմից, ռուսական յեղափոխութեան շարժման հետևանքով առաջացած բոլշևիկական հոսանքը միւս կողմից։

Այսպէս ուրեմն Եամախու կործանումը աւելորդ անգամ հաստատելով, որ աւելի՛ շատ տներ ու քաղաքներ մարդու՛ ձեռքով են քանդուած, քան թէ փոթորիկների ու երկրաշարժների, մենք Եամախու պատմութիւնը առաջ բերինք նաև ցոյց տալու համար, որ մահմեդականութիւնը Եամախում ոչ միայն ըստ Եղիշէ քահանայի ասածի՝ ,,չէր տրտաչարուում անկեղծարէն ու չէր համակրում մեր ջանքերին Ֆրանսը պաշտպանելու'' ընդդէմ տաճիկների, այլ նա ձևանալով լեզափոխական, նիկոլայեան բէժիմը պախարակող, զոհեր ու զուարակներ էր մատուցանում և օրեր համարում՝ սպասելով տաճկական արշաւանքին. ու տաճիկը չեկած դեռ, մի կողմից նրա բէժիմն էր պատուաստում, միւս կողմից Եամախու գարնիզոնին զօրք տալու խնդիրը պահանջ դնելով, չէր քաշւում հաւատացնելու, որ ինքն ևս այդ զօրքերով պաշտպանելու է Ֆրանսը տաճիկներից, հայերի և վրացիների հետ կողք կողքի՛, և որ ճանապարհները անվտանգ կդառնան, եթէ հայերը և մոլոկանները գարնիզոնի խնդրում զիջող հանդիսանան։

Ահա այսպիսի խարեբայ քաղաքականութեան ասպարէզ դարձած մի վայրում՝ հայը ակամայ կորցրեց իր հաւատարակշռութիւնը, որին աւելանալով բարեկամ ձևացող մոլոկանների երկդիմի քաղաքականութիւնը, նրան յուսահատութեան

գու

՝ հասցրին, և նա լքելով ամեն բան, ինքն էլ սատարեց, որ այդ գաւառն ու քաղաքը ամայանալ, որի մեծ կորուստը դեռ նոր է զգացուում. բայց երբ հայի՛ բարձի թողի արած արան ու անդաստանը, բերրի ու մշակած այգիները վերջնականապէս անսպասի վերածուին, այն ժամանակ միայն ապրէջանցի հայրենասէրը կհասկանայ իր սխալը, իսկ շամախեցիները օրհնութեամբ կյիշեն Ջաֆար-Ղուլուն, որ գուշակեց. ,,Դու առանց հայի չես կարող ապրել, և ոչ էլ նա առանց քեզ կեանք կունենայ՝՝։

Ղուբայի մասին խօսելիս Եղիշէ քահանայ Գեղամեանը գրում է. ,,Հայերին զետեղել էին քաղաքային բանտում, իսկ Ղուսարի 38 հայերին մի շինութեան մէջ։ Պատսարտուած!!, կամ եթէ ուզում էք՝ բանտարկուած հայերը կերակրուում էին ամեն մէկը կէս ֆունտ հաց ստանալով՝՝։

—Ոչ. հայերը բանտարկուեցին ինչպէս Ղուբայում, նոյնպէս և այլուր. դա ընդհանուր և մշակուած ծրագիր էր, և կո՛ր մտօք պէտք է լինել չհասկանալու համար այս բանը։ Եւ եթէ հայերի բանտարկութիւնը չյաջողուեց Շամախում, որի համար ընդարձակ բանտը վաղուց էր դատարկուած 300-ից աւելի քրէական բանտարկեալներից, որ ազատ արձակուեցին Մուսաֆա էֆէնդու հրամանով, պատճառը մերոնց կանխելն էր։

Սխալ և սուտ է Եղիշէ քահանայի հաղորդածը Գեօքչայի մասին, թէ մինչև Ամիրեանի վաշտի Գեօքչայի գաւառն անցնելը, տեղական հայ և թուրք ազգաբնակութեան մէջ ոչ մի ընդհարում տեղի չէր ունեցել։ Դեռ ևս մարտի մէջ՝ Գեօքչայից Բարք-Դարա տանող ճանապարհին, կամրջի մօտ սպանել էին Փառնակ քահանայ Շահրամանեանին, որին մերկացրել և կըտրատել էին. սպանել էին նոյնպէս և մի բոզամանդեցի ու մի գեօքչայեցի ճանապարհին, իսկ Մուսխլիում՝ երկու հոգի։ Ապրիլի սկզբներին յարձակուել էին թուրքերը Փաթաքլու գիւղի վրայ, որի բնակիչները ապաստանեցին Գիրք գիւղում։ Ապրիլի 15-ին յարձակուել էին Գարմախանի գիւղի վրայ, երկու տուն այրել, գիւղը թալանել, մի կին սպանել էին, իսկ ապրիլի 20 ից յետոյ յարձակումները Գեօքչայում յաճախակի էին, երբ հասաւ Ամիրեանը։

* * *

Մենք այս բոլորը առաջ բերինք, ոչ թէ անուղղայ հեղինակին խելքի բերելու, այլ հարկը արժանաւորաց տալով, ցոյց տալու նրա յանդուգն յաւակնութիւնը, որ առանց Եամախու դէպքերին, անց ու դարձին իրազեկ լինելու, էլ չենք ասում ականատես, զարդարում է իր գրքի ճակատը մատենագիր Եղիշէի խօսքերով, որը ներ-

կայ դէպքում սազական կլինէր կարդալ. ,,Ի կարծ ընդհատուցեալ և ի լուր զարթուցեալ, այլ ոչ անձամբ անձին պատահեցի, և ոչ ի տեղւոջն տեսի''։

Այսպէս սուտակասպաս գիրք թխելով, գուցէ ներելի լինէր տէրտէրին քարոզել քացարձակ թրքասիրութիւն. թրքաց օրիէնտացիա. նոյն իսկ մենք ներելի ենք համարում նրա համար Զէնով-Օհանի նման ասել.

,,Եկ, ոսկի տանենք, աղջիկներ տանենք,
Զոքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցէ մեզ զթայ,
Մեզ սրի չտայ...''

Բայց ուրիշի՛ ընձեռած նիւթերից օգտուելով, առանց հանդամանօրէն կշռադատելու աղաւաղել փաստերը. ելնել, ուզեղում ցցուած իր տենդենցը մի անգամ էլ ապնդելու համար փաստարանել, թէ հայերը աւելի շատ են թուրք սպանել, միայն նրա՛նք են թալանել, աւերել ու սրբապղծութիւններ կատարել Ղամախում, դա արդէն թրքասիրութիւն չէ, դա թրքամոլութիւն է մի հեղինակի կողմից, որ գիտէ՝ հայը սրբապղծութեան և սպանութեան դասեր թուրքից է սովորել. դա թրքամոլութիւն է հայ քահանայի կողմից, որը հաստատ գիտէ և չէ կարողանիէկուզ օրինակի համար, ցոյց տալ մի թրքուհի բռնութեամբ կամ ակամայ կին դարձած

հայ մարդուն, այն ժամանակ, երբ երկրորդ տարին է լրանում, որ հեղինակի քթի տակ, գիրքը գրելու օրերին և այժմ, Ադրբէջանի մայրաքաղաքում անգամ՝ երկու սեռի անթիւ հայ թշուառներ մեծ ու փոքր իշխանաւորների կրքերին զոհ են գարձած, խոշտանգուած. իսկ գեղեցիկները մի տեղից միւս տեղ են տարուում. ուշ գիշերներով են հանուում գուրս Սուրխանի և Մաշտաղոյի հարեմներից, քաղաքի փողոցներում շրջեցնելու համար։

Դա ծառայութիւն է մի հայ քահանայի կողմից այն վոհմակին, որի արհեստն է օրն ի բուն փաստերը խեղաթիւրելով ի վնաս հայութեան խօսել ի տարապարտուց, այն ժամանակ, երբ Ադրբէջան՝ ծնունդ տուած հարազատ տաճկաստանից՝ ոչնչով չէ՛ տարբերուում հայերի հետ վարելու եղանակի մէջ, որի նկարագիրը դեռ ժեռդ դարի ձեռագիր յիշատակարանը այսպէս է պատկերացնում. ,,Զի բաժանէին զորդիսն և ըզդրատերս ի մարց և ի հարց և զեղբայր յեղբարց և աղիողորմ էր լացն և ազազակն, զոր ոչ կարեմ գրով արկանել...''

Իսկ նրանց մասին, որ խուլ անկիւններում և Ադրբէջանի գաւառներում ,,կանխեցին ուրանալ զլուսաւոր հաւատս իւրեանց ի խնդիր կենաց և ի գինս հացի'', ո՞վ կարէ պատմել։

„Հաշեցան քահանայք[1]) ի լկանաց հալածչաց իւրեանց, և արկին զդիակունս նոցա գէշ—թռչնոց երկնից. պղծեցին զտաճարս մեր սուրբ, և զեկեղեցիս մեր որպէս զհիւզս մրգապահաց արարին“։ Ահա այս բոլորը Եղիշէ քահանայի կողմից մոռացութեան մատնուած, մինչ ադրբէջանի հայը փըշաքաղուած տեսնում է այս երկրորդ տաճկատատանի իր դէմ ուղղած նորահնար սարսափները և արհաւիրքները, ու ընդարմացած՝ չի կարողանում իրան հաշիւ տալ, թէ ինչ է սպասւում վաղուան օրը, մեր հեղինակը իր գրքով ժամանակ է գտել հայ ժողովրդի գլխին ընկոյզ կոտրելով, հաշիւները մաքրել – դաշնակցութեան հետ։

Ամենևին ցանկութիւն չունենալով հեղինակի յարձակումների դէմ դաշնակցութեան օգտին խօսք ասելու, մենք կարևոր ենք համարում այստեղ շեշտել այն արդահատելի հանգամանքը, որ տէրտէրի յայտնի ատելութիւնը և անզօր կատաղու-

---

1) Ծանօթութիւն. Զամախու և Գեօրչայի ու Ղուրայի քահանաներից սպանուած են՝ 1) տէր Եփրեմ Դաղայեան, Թամբաղեան, Երմենակ Գասպարեան, Տէր-Յովսէփեան, Զանրամանեան, Ատամ Փիրմիրդեան, Գէորգ Ալագեան, Բարսեղ Փիրմիրդեան, տէր Սիմէոն, Յովհաննէս Նաջարեանց և շատ ուրիշները, որոնց մասին դեռ հստակ տեղեկութիւններ չկան, և շատ շատերի անուններն էլ դեռ նոր պիտի լսենք։

թիւնը դէպի դաշնակցութիւնը լինելով Ֆանատիկի հիւանդգնութեան արդիւնք, փոխանակ դաշնակցութեան՝ թափում է հայ ժողովրդի՛ դլխին։ Եւ այստեղ զարմանալու ու անբնական ոչինչ չըկայ։ Եթէ ուղեղով ու մտքով հիւանդ ու Ֆանատիկ դաշնակցականը այնդում է, որ դաշնակցութիւնը ինքը հայ ժողովուրդն է, կամ՝ հայ ժողովուրդը ինքը դաշնակցութիւնն է, ինչ զարմանք, որ հակառակ բանակի նոյնպիսի հիւանդ մի Ֆանատիկ կարող է անպատիժ կերպով դաշնակցութեան փոխարէն թէ բանիւ և թէ գործով անտեղի հայհոյել հային, թքել ու մրոտել հայութիւնը, հայ ժողովուրդը։

Այս ուղղութեամբ թափած նրա լուտանքների մասին աւելորդ համարելով երկարացնելը, մենք վերջ ենք տալիս այս ընդդիմախօսութեանը, որովհետև ժողովրդի ասածի պէս՝ գժի տէրը կամաչի։

Վերջացնելով մեր ասելիքը հեղինակի գրքի ա. պրակի վերաբերմամբ, ընթերցողն անշուշտ նկատեց, որ մենք ոչինչ չառարկեցինք նոյն գրքի բ. պրակի նկատմամբ, որ նոյնպէս հարուստ է Եամախու և այլ գաւառների հայութեան վերաբերեալ տեղեկութիւններով։

Այս բ. պրակը լոյս է տեսել առաջինից բաւական ժամանակ անցած, երբ արդէն քահանա-

լին հարկաւոր նկատողութիւնն արուած էր ում կողմից պէտք էր, և ա. պրակի խեղաթիւրումները մատնանշուած էին։

Հէնց այդ տպաւորութիւնը մեղմելու դիտումով, և ոչ այլ նպատակով, է հրատարակել նա բ. պրակն ևս Եռամեայ գաւառում վերաբնակուած իրաւազուրկ հայութեան սև ու լկումներով լի կեանքի մի քանի ամիսների նկարագիրը տալով Ադրբէջանի իշխանութեան տակ, այն հայութեան, որ դատապարտուած է ստորաքարշ ու դանդաղ մահուան, ազգովին ոչնչացման։

Այս տեղեկութիւններն ևս քաղած լինելով նոյն աղբիւրից, որով հեղինակը օգտուել է ա. պրակը կազմելիս, ոչ մի դէպքում և ոչ մի տեղ հարկ չէ համարել մի լիշատակութիւն անելու այդ մասին։

Վ Ե Ր Ջ։

Պատրաստ է տպագրութեան համար՝

,,Ազուանից աշխարհի հայութեան բնաջնջումը, և նրա բեկորների կեանքը Ադրբէջանի իշխանութեան տակ՝՝։

Թամախեցի։